

# ՏԵՆՊԵՐԱՄԵՆՏ

ԵՒ

## ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մի հոգեբանական եւ մանկավարժական հետազոտութիւն

Յ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅԻ

(ՆԻԻՐ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ)

Նթէ մենք բնութիւնը դիտենք, կը տեսնենք որ սա հասարակ, պարզ եւ միակողմանի չէ, այլ բարդ ու բազմակողմանի: Տեսէք, լարգելի ընթերցողներ, բնութեան գործերը: Ինչպէս բազմակողմանի եւ բարդ են նոքա. չէք կարող գտնել երկու տերեւ, երկու ծաղիկ, որ միմեանց նման լինին. դոցանից իւրաքանչիւրը մի առանձին գործ է, որի նմանը չէք կարող գտնել, որ թէ ձեռով եւ թէ գոյնով միւսից չը զանազանէր: Մտենք մարդկային աշխարհը. չենք կարող երկու մարդ, երկու երեխա գտնել, որ իրար նման լինին: Ոչ միայն մարդկային մարմինը, այլ եւ մարդկային հոգին զանազան է եւ կրում է իւր առանձնապատկութիւնները: Թողնենք որ աչտուղ Պէրէ'ն խօսի. «Նրեք երեխայ, 8-ից մինչեւ 9 ամսական, նստած են կապերտի վերայ, սենեակի մէջ տեղը. ես խօսում եմ բարձր ձայնով, որպէս զի նոցա ուշադրութիւնը դրաւեմ եւ շտապում եմ կապերտի վերայ, երեխաների նստած տեղից մի մետր հեռու, մի փոքրիկ փայտէ ձի դնել: Նոցանից առաջինը ուրախութեան ձայներ է արձակում, բայց է անում իւր բերանը եւ նալում խաղալիքին: Երկրորդ երեխան նալում է նորան սառնասրտութեամբ: Անցնում է 5 վայրկեան, առաջինը բարձրացնում է իւր ձեռքերն եւ սկսում է ձեռքով անել եւ գլուխը առաջ է տանում: Երկրորդն եւ ձեռքերը բարձրացնում է, բայց աւելի հանդարտութեամբ քան թէ առաջինը, աւելի հետեւում է առաջինին: Երրորդը նալում է ինչպէս իւր ընկերները վրդովւում են եւ սկսում է ինքն էլ ձայներ հանել: Առաջինն այլ եւ չէ կարողանում իրան զսպել, առաջ է ձգւում եւ վալը է ընկնում կողքի վերայ, գլուխը



զարկելով լատակին՝ Նա լալիս է. ևս բարձրացնում ևմ նորան և նա սկըսում է կրկին շարունակել իւր առաջնալ գործը և քնտոլ աշխատում է չորս տոով մօտենալ ձիուն: Երկրորդը սուր նաչում է խաղալիքին, երբեմն ևս նաչում է իմ վերալու մի տեսակ ակնարկութիւններ է անում և պատրաստ է լաց լինելու: Իսկ ինչ երրորդին է վերաբերում, նա նաչում է ինչպէս առաջինը սողում է գետնի վերալ, կարծես թէ նորան ալդ է աւելի հետաքրքրում քան թէ ձիուն: Այս օրինակից կարելի է տեսնել, թէ միևնոյն առարկայից առաջացած զրդիւի և ցանկութեան ուժը որքան զանազան է զանազան անհատների մէջ:

Սակաւն աշտիւխի զանազանութեամբ հանդերձ, բոլորս էլ միևնոյն բարոյական նպատակին ենք ձգտում, այն է՝ անբքին ազատութեան: Այս առանձնադատութիւններն պէտք է ռոնակոխ անենք, որովհետեւ մենք չենք ցանկանում բարոյական մարդկանց միանման օրինակներ զարգացնել: Բացի դրանից, առանց ալդ առանձնադատութիւնների, չէինք կարող մենք առհասարակ դատարարակել, ինչպէս տոն չենք կարող շինել, առանց հիմք դնելու, որովհետեւ ալդ առանձնադատութիւնները դատարարակութեան հիմունքներն են. ինչ կը լինէր դատարարակութիւնը առանց անհատականութեան: Այդ մէջ շինած, առանց հիմքի մի տուն, մի լոկ արհեստ, մի մեքենադականութիւն է, որ ոչ մի նպատակի ծառայել չէ կարող:

# I.

Խրաքանչիւր մարդ զանաւում է հոգու և մարմնի զգալարանական (օրգանական) միութեան մէջ: Այս միութեամբն ենք մենք անհատականութիւն կազմում: Կարմիրը ու հոգին միասին ստեղծում են մարդու խոհական էութիւնը և մարդկային բնութեան էութեան լատկութիւններն ևս կազմում: Նախ նմանում ենք իրար ալ տեսակէտից. սակաւն մարդուս ալդ բնութեան վերալ իշխում է անհատականութեան օրէնքը, որի համաձայն ամբողջ բնութեան մէջ չկան երկու միանման էութիւններ, խրաքանչիւր մարդ տնի իւր մէջ մի առանձնադատկութիւն, աշխնքն՝ մի սկզբնական օրշտմն, որը հոգու վերաբերմամբ կոչւում է տեմպերամենտ (Temperament):

Ար աշտիւխի մի սկզբնական օրշտում խրաքանչիւր մարդումէջ նկատել կարող ենք և որ դա անհատականութեան հիմքն է՝ հիմնած է փաստերի վերալ. սակաւն թէ ալդ սկզբնական լատկութիւնը մարդ իւր հետ է աշխարհ բերում թէ ոչ՝ թողնում ենք առանց պատասխանի, ըստ որում շատ կը հետանալինք մեր նիւթից. միայն ապքանը կ'ատենք, որ, եթէ մարդս ալդ լատկութիւնը իւր հետ էլ աշխարհ չը բերէ, անշուշտ ծնւելուն պէս՝ նա կը ստանալ:

Ալդ սկզբնական լատկութիւնների տարբերութիւնը հիմնած է ոչ թէ



միմիաճն հոգու և մարմնի զանազան, տարբեր առանձնապատկերներէ, ալ ալզ վերջինից չառաջացած հոգու և մարմնի փոխադարձ չարաբերութիւնների վերաջ: Մարմինը և հոգին միշտ իրար վերաջ փոխադարձաբար ազդում են՝ հոգին մարմնի և մարմինը հոգու վերաջ: Հոգին կախումն ունի մարմնից, ըստ որում նա վերջինի հետ չոգնած, թուլ, ուժեղ, զարթ է: Ամբողջ մարմնի մէջ հոգին ևս առողջ է, մինչդեռ հիւանդ մարմնի մէջ հոգին ևս կրում է հիւանդութիւն: Մի կաթիլ արիւնը, որ հոսում է աննպատակ մեր մարմնից, կարող է մեր մտաւոր կարողութիւնը թուլացնել: Մարմնի փոփոխութեան հետ, որ տեղի է ունենում զանազան հասակներում, տեղի է ունենում զուգընթացաբար և հոգու փոփոխութիւն: Մեր հոգին աճում և հասունանում է մարմնի հետ, ալզ վերջինը երեխայական է՝ երեխայի մէջ, ծերացած և թուլացած է՝ ծերոտնու մէջ: Մարմնի հոգուց կախումն ունենալը երեան է զայլիս զանազան դէպքերում: Մեր մարմնի անդամների բոլոր շարժողութիւնները մեր հոգեկան զրութիւնների հետեւանքներ են. հոգին արտապատում է իւր միտքը նախադրով, ձայնով, խօսքով: Նախադրի մէջ ապրում է ցանկութիւնն ու փափաղը, փալում է քաջութիւնը, խռովում սիրտը, մթնանում տխրութիւնը, դադարում բարկութիւնը: Հոգին ընծալում է ձայնին բաղմաթիւ զեղզեղանքներ. նա ստիպում է նորան երբեմն թնդալ հաստ ու դօրեղ, երբեմն ճշալ բարակ ու մեղմ. նա երբեմն փոթորիկի պէս անցնում է աղաղակելով ու շփնջ հանելով, իսկ երբեմն ցոյց է տալիս իւր վատ տրամադրութիւնը, մաղասաւորութիւնը իւր ձգձգուն և կիսաձայն ճշումով: Լեզուի մէջ կատարելապէս ցոլանում է մարդու հոգին, ուստի և իրաւացի են դատում մարդու իւր լեզուով. «Խօսիր, որպէս զի ես քեզ տեսնեմ», ասաց Սոկրատէսը Խարմիտեսին: Բացի դորանից, հոգին շատ բազմազան և բազմանշան շարժողութիւններ է ընծալում մարմնի անդամներին, գրեթէ հոգու իւրաքանչիւր զրութիւնը նորա մէջ գտնում է իւր կատարեալ արտապատութիւնը: Զարմացածը ծափահարում է, բարկացածը ուրրում է իւր ձեռքերը, սպառնացողը ցոյց է տալիս իւր բռնեցքը, բարկացածը տրոխում է ոտներով (Drbal—Psychologie):

Հոգու և մարմնի աջն փոխադարձ չարաբերութիւնը տեղի ունի նեարդերի միջնորդութեամբ: Բաց որովհետեւ թէ մարմնի կաղմութիւնը և թէ նեարդերի համակարգութիւնը (սխտեմը) իւրաքանչիւր անհատի մէջ տարբերում են, ուստի հոգու և մարմնի մէջ տեղի ունեցող փոխադարձ չարաբերութիւնը իւրաքանչիւր անհատի մէջ տարբեր է:

Նեարդերի համակարգութիւնը բաղկացած է զգացութիւնների և շարժողութիւնների նեարդերից, որոնցից առաջինը ոչ թէ միմիաճն մեր սեպհական մարմնի զրութեան լրաբերն է, ալ և արտաքին աշխարհի երեւոթիւնները զրդիւնների ձեռով մեր հոգուն հասցնողը: Վերջինները սակայն հոգուց են զուրս գալիս և ռզնորում դէպի մկանունքներն, որոնցով շար-



ժողովիւններ են լատաջացում անդամներն մէջ, որով հոգու իրաւունքն և հրամանը կատարում են: Այդ վերջիններն հոգու մի տեսակ ծառաներն են, որոնք տիրջ ամեն մի պատէրը տեղ են հասցնում: Մի խօսքով՝ ազդեակութեամբ ծառայում են ինքնազործունէութեան համար: Ուրեմն ազդեակութեան շարքերում լինելը ոչ թէ միմիայն տեղի է ունենում մեր սեպհական բնութեան շրջանի մէջ, այլ և մեր սեպհական բնութիւնը կախումն ունի միզ շրջապատող բնութիւնից: Հոգու և մարմնի մէջ տեղի ունեցած փոխադարձ շարքերութեան գործարանն է նեարդային սխտեմը (համակարգութիւն), իսկ մարդու և արտաքին աշխարհի միջի գործարանը զգալարանքներն են:

Այ դք չէ կարող արտաքին աշխարհի ազդեցութեանը զիմաղրել, ըստ որում ոչ ոք չէ կարող հոգու դոներն, զգալարանքները բոլորովին փակել: Մարդ սմբողջութեան միայն մի մասն է, ազդեցութեանի գործութիւնից չէ կարող հեռանալ: Քիչ նշանակութիւն չունի նաև, թէ ինչ ծնողներից ենք ծնւել և ինչ տեղ ենք կրթւել, ինչ հողի վերալ ենք մեծացել:

Նոյնպէս ճիշդ է, որ բնութեան միեմունք իրերն իւրաքանչիւր մարդու վերալ միտելոյ չեն ազդում: Ինչ բան մէկին ուղեորում է, միւսը ընդունում է նորան ստանաւորութեամբ: Այ ուղում է թող զիշերով հիանալ, զմալի լուսնակի վերալ, բայց ես, ասում է Վալերիանայելը իւր զատախօսութեան մէջ, մէկին դատ, որ զուում էր լուսնակի զիշերից և ազդեարանը բանաստեղծ և երաժիշտ էր: Ահաւասիկ հետեւալն է պատմում Գիտմերը:

«Մի քաղմանդամ բնտանէք մի առաւօտ կանդնած էր իրանց պաշտամբի վերալ: Բնութիւնը իւր զեղեցկութիւնը մի տեսակ հպարտութեամբ ցոյց էր տալիս: Արեւելքում երեսմէին արեգակի փալուն ճառագալթներն, իսկ լուսնակն, ումը կորցրած, իր զգոյն գէմքը հեռուց ցոյց էր տալիս: Բոլորեքեան հիանում էին ազգեցիկ տեսարանով. սակալն անդամների մէջ մէկը զանւեց, որ երեսը շուտ տալով գէպի անդամներն ասաց.—ինչ կալ ալտեղ տեսնելու, միթէ իւրաքանչիւր օր չէք տեսնում միեմունք արեգակը, միեմունք լուսինը և միեմունք բնութիւնը»:

Այս օրինակից վատլ տանք հետեւալ հարցը. որտեղից է լատաջացում բնութեան այս տարբեր ազդեցութիւնը և ներգործութիւնը մարդկանց վերալ: Այս հարցին շատ հեշտ է պատասխանել, ինչպէս վերեն ասացինք, հոգու և մարմնի փոխադարձ շարքերութեան գործարանը նեարդերի սխտեմն է, մարդու և արտաքին աշխարհին էլ զգալարանքներն են. ուստի եթէ նեարդերի զգլուն և ումը զանապան անհատների մէջ տարբեր են, ապա պէտք է արտաքին աշխարհի ազդեցութիւններն էլ տարբեր լինին: Ուրեմն մեր նեարդային սխտեմի բնաւորութեանց չափութիւններն շնորհիւ միզ շրջապատող արտաքին աշխարհի ազդեցութիւններն էլ տարբեր են ազդում իւրաքանչիւր անհատի վերալ: Բայց ազգ սկզբնական նեարդային սխտեմի չափութիւններն ժամանակի ազդեցութեան տակ չեն փոփոխ-



տում, ալլ իրանց ճախիլն դիրքի մէջ ամրանում են: Նեարդալին սխտեմի անփոփոխ չատկութեանց հետեանքն՝ հողեկան դրութիւնների անփոփոխ չատկութիւնն է: Հոգու դրութեանց անփոփոխ չատկութիւնը ուժի և դըր-գիւրի վերաբերմամբ, եթէ ալլ վերջինը նեարդալին սխտեմի անփոփոխ չատկութեանց հետեանքն է, կոչւում է տեմպերամենտ:

Աչքի առաջ ունենալով տեմպերամենտի նշանակութիւնը դաստիարակութեան համար, մանրամասնօրէն քննենք ալս խնդիրն և մի առ մի թիւնք տեմպերամենտի չատկանիշ կէտերը: Հիմնւելով մեր վերեւում ասածների վերաջ, նկատենք որ իւրաքանչիւր անձնաւորութիւն առանձին մի տեմպերամենտ ունի. սակայն եթէ աւելի մանրամասնօրէն քննելու լինինք, իւրաքանչիւր անհատի հողեկան դրութիւնների բնական չատկութիւնները կարող ենք չորս տեմպերամենտների բաժանել.

1. Արիւնալին (sanguinischer Temperament) կամ սանգւինական
2. Բարկացկոտ (cholischer " ) — խօլերական
3. Մեղամաղձոտ (melancholischer " ) — մեղանխօւալին
4. Մաղասալին (flegmatischer " ) — ֆլեգմալին

## II.

### ԱՐԻՒՆԱՅԻՆ ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Արիւնալին տեմպերամենտի էական չատկութիւնն է դիւրադրդիւ լինել արտաքին տպաւորութիւններն ընդունելու, սակայն ոչ լուսանկարչի թերթի նման, որ մեքենայաբար ընդունում է արտաքին տպաւորութիւններն, ալլ որպէս մի կենդանի էակ, որը արտաքին աշխարհին ընդգիմագրում է և ներգործող է: Որովհետև սանգւինիկը կախումն ունի ներկալի փոփոխութիւններից, ուստի և նա ապրում է ներկայումս և ներկալի համար: Այս տեմպերամենտի դրական կողմն է, ինչպէս վերեն ասացինք, հեշտ ըմբռնելը, հեշտ գրգուռելը և ուշադիր լինելը հետաքրքրական երևոյթ-ներին, ոգևորող իդէալներին: Ահաւասիկ սոքա են լաւ կողմերն:

Եթէ մենք ալլ տեմպերամենտը կրողի էական չատկութիւններից մէկը զւարճութիւնն ենք համարում, ալլ նորանից է, որ նա կեանքի վատ կողմերի վերաջ շատ չէ մտածում, ապա թէ ոչ կեանքը նորա համար դրական բարիքներ չէր ունենալ: Նա աւելի իրերի և զանազան դէպքերի լաւ կողմերն է դուրս բերում, քան թէ վատը: Բացի դորանից գրգռման ժամանակ ընդունակ է նա խկոյն համարձակ վճիռներ տալ և մինչև անգամ իւր կեանքը զոհ բերել: Բաց ալլ չարատե չէ, նա ուղղում է շատ բան և գործում է քիչ. նա զբաղմունքից շատ լողնող է: Սանգւինիկը ընդունակ է մինչև անգամ կեանքի բոլոր դրութիւնների մէջ մտնել. նա արամադիր է բոլոր տեսակ զւարճութիւնների, լինին դոքա թէ մտաւոր և



թէ ֆիզիքական: Նա անող է, ժամանակի զաւակ է, իւրաքանչիւրին հաւատ ընծալող և վատը խնդնող զգացող, ուստի և սանդղինիկն է մի ընական անգամ ընկերութեան: Նա ուղում է որ բոլորեքեան իրան հաւանեն: Նա քաղաքաւարի է, զաւրճախօս և փալլուն երեակալութեան տէր է:

Ո՛վ չէր ուրախանալ սանդղինիկի լաւ կողմերի վերաջ, Բայց մի մոռանալ, ընթերցող, ուր որ շատ լուս կալ, ալետող և շատ սուեր կալ, սանդղինիկի ալզ դիւրագրգուլթիւնը, դիւրըմբանողութիւնը և արագ եղբակացութիւն կապանքնն տանում է նորան դէպի արտաքինը և ճոխարանութիւնը: Նա չէ սիրում մի բան ամուր պահել. նա դիւմում է ամեն բանի միակողմանի կերպով: Նորա հակացքներն ընթանում են միշտ արագութեամբ, նա համոզմունք չունի: Նա խոտտանում է, բայց խօսքը չէ պահում, որովհետեւ նա առաջ խորը չէ մտածել, թէ արդեօք իւր խոտումունքը կատարել կարող է: Նա չափազանց բարի է և ընդունակ է ուրիշներին օգնելու. նա խնդն ձգում է իրան, որպէս ժամանակի զաւակ, մի որ և է կուսակցութեան մէջ: Ուրիշների հաւանութեան արժանանալու համար՝ նա արտաքին փալլի է ձգտում:

Սիրելի ընթերցող, նախքան վրադ, ուսումնասիրիր քո կեանքը և քո (կեա)ր, (ժան)իր դրեկը, զուցէ դու ես պատկանում ես ալզ տեմպերամենտին:

Ոչ թէ միմիայն հին հելլենական աղոյն, ալ և ժամանակակից աղոյների մէջ շատերը կան, զլիաւորապէս երեխաների և աշակերտների մէջ: Արիւնադին տեմպերամենտն աւելի լատուկ է քաղաքների քան գիւղերի մանուկներին: Պարզ է որ գիւղական երեխայի միակողմանի կեանքը, չըրջապատող բնութեան, մարդկանց և սնունդի միակողմանի լինելը խանգարում են սանդղինական տեմպերամենտի դարգացմանը: Մինչդեռ քաղաքի ճոխ և փարթամ կեանքն աւելի դարկ է տալիս վերողջեալ տեմպերամենտի դարգացման: Մենք վերեւում որոշեցինք սորա լաւ ու վատ կողմերն և նշեցանք լինչեցինք, որ սա աւելի լատուկ է մանուկներին: Ուրեմն ինչպէս պէտք է լինի առհասարակ ծնողների և դաստիարակների վարմունքի եղանակը դէպի ալզպիսի մանուկներն:

Որպէս վատ կողմեր ալ խառնւածքի կարելի է համարել՝ ցրւածութիւն, արտաքին փալլի ձգտումն, շատախօսութիւն, ինքնահաւանութիւն և փոփոխամտութիւն: Եթէ մանուկը սկսում է իւր արտաքինի մասին մտածել, շատախօս լինել, որն և սանդղինիկ մանկան զլիաւոր լատկութիւնն է, պէտք է արդէն ինքնա մտնել հասակին անհամապատասխան ընկերական շրջանի մէջ և սովորեցնել նորան լաւ լինելն, ոչ մի ժամանակ չը դադարել նորա լաւ վարմունքը, ալ ցոյց տալ, որ նոր ապրածն ամեն մարդ կարող է կատարել. մի խօսքով նորա լաւ կողմերին մանկան առաջ մնծ նշանակութիւն չը տալ, բայց և չը մոռանալ՝ նորան ալետլիսի դրութեան մէջ ձգել, որ նոյնը երկրորդ անգամ կրկնէ, մինչև սովորութիւն դառնալ նորա համար ալզպիսի վարմունքը:



Յրևածութեան դէմ պէտք է կուէլ հետաքրքրական, մտածական ուժը զարգացնող դաստառութեամբ, որը լարած ուշադրութիւն է պահանջում: Վերջապէս տանք մեզ հետեւեալ հարցը. ինչ կարող է դառնալ այս տեսակերամեծութիւնը: Իսկ այս հարցին կարելի է պատասխանել մի ուրիշ հարց տալով: Արդեօք Շիլլերը, Հայնէն, Լաւթնիցը, Վոլտերը սանդղինիկ էին թէ ոչ: Այս հարցին պէտք է դրական պատասխան տանք, և այն ժամանակ կ'ունենանք առաջին հարցի պատասխանը:

### III.

#### ԲԱՐԿԱՅՈՏ (խոլերական) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Վերոյիշեալ զիւրադրողութեան տեսակերամեծութիւնը հետեւում է տաքարեւն խոլերականը: Առաջինը զգալութիւններն տեսակերամեծութիւնն էր, իսկ սա գործունէութեան: Խոլերականը գործում է ներկայումս, աչքի առաջ առնելով անցեալը՝ ապագան բարենորոգելու համար: Այս խօսքերիցս երևում է, որ խոլերականի գեղեցիկ կողմն է գործելու ուժը: Խոլերականը նույնպէս ունի սանդղինիկի զիւրմբոնողութիւնը, սակայն ոչ թէ առաջինի նման մանրակրկիտ է և փոփոխամիտ, այլ միմիայն մի մտքով է լարած. այդ կարող է լինել՝ պատիւ, ազատութիւն, ճշմարտութիւն. նա աշխատում է միմիայն մի զաղափարի ներքի իրան: Սորա համաձայն նորա զգացումները միշտ անբաժան են կրքից. նա կամ իւր անձի համար է միայն, կամ ազատութեան ոգեւորող բարեկամ, կամ ստրկութեան ոխերիմ թշնամի է:

Այս զգացումները հիմնւած են ուժեղ մտապատկերների փոխադարձ լարաքրտութիւնների վերաջ, ուստի և չառաջացնում են խոլերիկի մէջ հաստատ և ուժեղ կամք: Այդ վերջինի հետ և չառաջացնում է ինքնագիտակցութիւն, այսինքն՝ ճանաչումն իւր սեպհական («ես»)-ի: Ուստի նորա կամքը հաստատ վճռող է, բայց ոչ խելոյն գործին զիմող, ինչպէս սանդղինիկը: Նորա կամքը չէ նմանում գիսաւոր աստղի, այլ հաստատ և լարատե է. նա սիրում է նախ մտածել, խորհել, աշխատել. նա ասում է վերացական զաղափարների փետից ընկնելը, աւելի ուրախութեամբ զբաղւում է նա ծրագրիւններով և գործով: Խոլերիկը սիրում է ճշմարտութիւնը, նա ասում է ծուռ ճանապարհները. նորա համար նպատակն չէ արդարացնում միջոցը: Խոլերիկը կարող է սիրել, այն էլ երկարատե սիրով վառել, բայց և այնպէս կարող է նա նոյն չափով ատել: Բնութեան և արեւստի մէջ սիրում է նա նշանաւոր գործերը, իսկ գիտութիւնների մէջ՝ գործնականը:

Մինչև այժմ մենք գործ ունէինք այս տեսակերամեծութիւնը լաւագոյն կողմերի հետ. այժմ թւենք նորա վատ կողմերը:

Վերել նկատեցինք, որ նորա էական լատկութիւնն է՝ գործել, կամքի ուժը: Բայց այդ ուժը չէ կանգնած մի որոշեալ սահմանի վերայ, չը կաջ



մի որոշ չափ, տեղն ընկած տեղը՝ անցնում է նա իւր չափից, Իւրաքանչիւր ընդդիմադրութիւն մղում է նորան դէպի մարմնական ուժը. ուժեղ հակառակորդներն առջև նա կրքոտ է, բարկացկոտ և անխառնացի. Նորա բարկութեան լաճախ հետեւում է արխանդութիւն. Նորա հիմնական լատկութիւններից մէկն է կամակորութիւնը. նա ամեն դործի մէջ սոսկալի կամակոր է. Նապօլեօն առաջինը պատկանում էր այս տեսակբանտին: Իւրաքանչիւր դործ լատաջացնում էր նորա մէջ նոր զրդիւններ: Պատերազմի ժամանակ մտածում էր նա խաղաղութեան լաջող դաշնագրութեան մասին, դաշնագրութիւնից լեռող՝ թէ ինչպէս պէտք է կրկին աղբ վերջինը քանդել. Ֆրանսիայում նստած՝ մտածում էր նա Ռուսաստանի մասին, Ռուսաստանում—Հնդկաստանի մասին: Նոյն իսկ ս. Հեղինէ կղզու վերադարձելուն էլին նորան իւր կամ ուրիշ զօրավարների, ինչպէս Կեսարի, դործերի նկարագրութիւնը: Նորա բոլոր դործերի մէջ աչքի էր ընկնում իւր սեպհական «կառ»-ը: Աղբ վերջինը խորերիկի մէջ իւրաքանչիւր դէպքում ուղում է իշխող լինել, մեծ դեր կատարել խորերիկը ուղում է ամեն ինչ ինքը արած լինի, ամեն բանի վերադ ինքն իշխող լինի. Նա լաճախ օգնում է թողլին, ոչ թէ միմիայն օգնելու նպատակով, ալ որպէս զի իւր սեպհական «կառ»-ը փառլէ: Հէնց այդ պատճառով նա պաշտում է ձեռականութիւնը և արտաքին փառք:

Խորերական տեսակբանտին ևն պատկանում բոլոր մեծ քաղաքագէտները, զօրավարները, վերանորոգիչները: Մի խօսքով աղբ տեսակբանտին օրինակներ առատ կարելի է գտնել ազգերի պատմութեան մէջ: Ինչպէս Վոլտերը, Մոլիերը, Իսաակ Լաֆոնտը օրէնսդրին և հովելին, Ադէքսանդր Մեծին, Ֆրիդրիխ Կրիստիան Կրիստիան, ազգերի ճշող Նապօլեօնին, քարաւիրա Գրիգոր VII-րդ պապին և մեծ վերանորոգիչ Լիւթերին. իսկ նոր ժամանակներում Բրանդերին (Eiserner Kanzler):

Այս տեսակբանտար թէև գտնում է կրեխաների մէջ, սակայն նոյնպէս ստիք, ինչպէս հասակն առածներն մէջ:

Ընթերցողներ, չէք տեսել փայրենի, չարամիտ կրեխաներ, որոնք ձգտումն ունին գործելու թէկուզ դէպի չարն. չէք տեսել բնառնիքներ, որոնք իրանց չար պատուհասից զուտ են, որը ամբողջ բնառնիքն իրանում է դրադեցնում, խրատ, խօսք, լաց, պաղատանք չէ լսում: Չէք տեսել մանուկներ, որոնք սիրով և ուրախութեամբ ուղում են սովորել, հետաքրքրւում են և հարցաւեր են ամեն բանի մէջ: Մանուկներ, որոնք աննկատելի կերպով ըմբռնում են ալն, որին ուրիշները սխտեմական դարգացման ճանապարհով են հանում, մանուկներ, որոնք արդէն ստացել են ինչ որ պէտք է մատակարարելին, մանուկներ, որոնք ուղում են ամեն բանի մէջ խառնել, փորձել: Ի՞նչպէս պէտք է ալժմ ապագայի մանուկներին կրթել: Ազգայիններին գոցել, ընթերցողը կարծէ թէ հեշտ է կրթել, դատաւարակել, սակայն նա մեծ սխալ գործած կը լինի, ըստ որում մեք



վերևում տեսանք, որ նորա կամքի ուժը մի որոշ չափ չունի, նա չաճախ անցնում է իւր սահմանից, այսինքն կարող է իւրաքանչիւր դէպքում իրան կորցնել: Այս դէպքում թողենք Wackeznagel-ին խօսելու. «Նորա սանձը բաց չը թողնել, բայց և այնպէս նորան անբնական սահմանների մէջ չը ձգել, ուրիշ խօսքերով՝ շատ չը ճնշել»:

Եթէ նորա սանձը, ղեկը մեր ձեռքին չը պահենք, այն ժամանակ կը ստանանք մենք կատարեալ վալրենի տիպ, որից ամենայն չարամտութիւն, անբարոյականութիւն սպասել կարելի է: Իսկ եթէ աշխատենք նորան բուրրովին ճնշել, այն ժամանակ ճնշումից ազատւելուն պէս կը նմանի մի վալրենի ձիու, որով մենք ճանապարհորդել ենք ուզում և անշուշտ ամեն մի բոլոր պէտք է մի փորձանքի սպասենք:

Ուժի դէմ ուժ գործ դնելով՝ կը հասնենք կամակորութեան: Այս դէպքում ուսուցչի և աշակերտի չարաբերութիւնը կը նմանի պատերազմական դրութեան: Խուրբական երեսփայլի դաստիարակութեան համար հարկաւոր չեն զինուորած և խիստ մարդիկ, այլ մարդիկ, որոնք ամենայն ժամանակ կարող են սառնասիրտ լինել և աշխատել երեսփայլ հոգու մէջ մտնել, խօսքերով աղղել, հասկացնել, պարզել նրանց զբաղմունքը:

Այն ժամանակ միայն ուսուցչիչ կարող է օգուտ բերած լինել, այն ժամանակ միայն կարողացած կը լինինք ասպազաւում աղղին, պետութեան, եկեղեցւոյն մեծ մարդիկ տալ: Սխալ չէ ասում Կոմենիոսը աչս տեսպերամենտին պատկանող երեսփաների մասին. «Այսպիսիները ուսումնարանում ատելի են. սակայն կարող են մեծ մարդիկ դառնալ, եթէ մարդ նոցա հետ վարւելու եղանակը իմանալ»:

#### IV.

#### ՄԵԼԱՄԱՂՁՈՏ (մեղանխուղւին) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

«Եթէ արիւնալին տեսպերամենտը նմանում է ժպտող դարձանը, խուրբականը—տաք և տօթ ամբանը, ապա մեղամաղձոտը նմանում է ամպամած, տխուր աշնանը»:

Մեղանխուղւին տեսպերամենտը մի կողմից խուրբականի, միւս կողմից արիւնալինի հակառակն է. եթէ խուրբականը ձգտում է գործունէութեան, ապա մեղամաղձոտն աշխատում է իրան հեռու պահել, ապրել ներքին աշխարհով միայն: Յիշողութիւնը նորա գործունէութիւնն է: Եթէ սանգւինիկը զանազան տալաւորութիւններ հեշտ է ըմբռնում, ապա մեղանխուղիկը դիմաւորում է արտաքին աշխարհին բոլորովին սառնասրտութեամբ: Նա շատ զժւար գրգռող է: Նորա սիրտն օտար տալաւորութիւնների համար բոլորովին անմատչելի է. նա չէ կարող ասել և բացատրել այն, ինչ որ զգում է. նա նմանում է մի ոչխարի, որի դէմքից երևում է, որ անմիտ է և իրան օգնել չէ կարող: Սակայն երբ նա իւր զգացածը մշակում է, որ կարող է



տեղի ունենալ միաշնակութեամբ, ալն ժամանակ նորա զիտեցածը ամենահիմնաւորն է և նորա զործունէութիւնն ամենապարտօնը. ուստի ալս տեմպերամենտը պարունակում է իւր մէջ ոչ սանդւինիկի թուլութիւնը, ոչ էլ խողերիկի չափազանց ուժը, այլ ալի երկուսի մէջ տեղն է գտանւում:

Հետեւաբար մեղանխողիկի վերադ ազդողը ոչ ակնթարթն է և ոչ էլ անմիջական զրդիւր, այլ ալն աշխարհը, որ իւր ներսում արդէն կազմակերպուել է, նորա անփաղ աչքերն ոչ թէ դէպի արտաքինն են ուղղւած, այլ դէպի ներքինը:

Ուստի և մեղանխողիկը չէ սիրում թաղեական ներկան և ճոխ աշխարհն, այլ միաշնակութիւնը և խորին լուսթիւնը, ուր նա կարող է անցեալի վերադ մտածել: Նորա զործունէութիւնը կապանում է զխաւորապէս անցեալի վիշողութեան մէջ, և եթէ անցեալը նորան չէ գոհացնում, ալն ժամանակ վիշողութեան փոխարինում են լուսոյ երազներ ազազալի վերաբերեալ:

Ուրեմն եթէ սանդւինիկը ապրում է ներկալի և թուրիկը ազազալի համար, ապա մեղանխողիկը ապրում է անցեալի համար: Եթէ սանդւինիկին աշխարհս ներկապանում է իբրեւ մի ժպտող պարտէզ, խողերիկին մի ահարկու պատերազմական դաշտ, ապա մեղանխողիկին՝ մի հանգստարան, որի մէջ միմիայն խորին լուսթիւնն է իշխողը: Եթէ սանդւինիկի սիրած երգն է «Ուրախացուք ուրեմն» (Gaudeamus igitur...), ապա մեղանխողիկին՝ «Ինձ համար չէ զարնան դալը...»

Որովհետեւ մեղանխողիկը արտաքին աշխարհի ազդեցութիւնից անկախ է, ուստի նորա զգալութիւններն և զգացումները չարատե են, ըստ որում ալի վերջինները չեն ազդում ներկալ երեւոյթներից: Հէնց ալի հիման վերադ, նորա կամքը չարատե և անսովորութիւն է, նա չամբընթաց է, դժւար հասկացող և ամեն բանից անբաւական:

Ասկալն ալի լուսադալն կողմերի հէտ սերտ կապւած են և վատ կողմեր, ըստ որում անցեալում խորասուզւելու հեռանում է նա ներկալիցս, որովհետեւ չեղում է ազազալի մասին ուղիղ կարծիքից, համոզմունքից:

Ահա ալս կէտումն է կապանում մեղանխողիկի փտանգաւոր կողմը. ներկան չը հասկանալով ձգում է նա իւր երեսին մի սե քող, որով և երեսում է կեանքից արդէն զազարած, չոգնած և կուշտ: Զգելով ալի սե քողն իւր երեսին, նա ձգտում է ինքնահաւանութեան, որն և միմիայն կախումն է ունենում իւր սեպական տրամադրութիւնից և զգացումներից, որն և հեռու է մնում իրական կեանքի խնդիրների վերլուծումից: Այսպիսով հեշտութեամբ բնկնում է նա մանրազրդիւ բաների լետից և սկսում է կասկածանքով վերաբերուել դէպի իւր մերձաւորն և անբաւական լինել Աստծուց:

Բայց չը նազելով ալս խաւար կողմերին, ալս տեմպերամենտին են պատկանում բազմաթիւ բանաստեղծներ, փիլիսոփաներ և զիտնականներ: Նախ սրբազան պատմութեան մէջ գտնում ենք մենք երկու խոր մտածող



անձեր՝ մէկը հինի, միւսը նորի մէջ. անտեղ Երեմիա մարդարէն, իսկ ալստեղ Յովհաննէս առաքեալը. ալդ վերջինը ի հարկէ խառնուող է խոլերական և մեղանխողին տեմպերամենտների թող վիշէ ընթերցողը ալդ վերջինի երկասիրութիւնները, նորա աւետարանը, որ մեզ սովորեցնում է թէ ինչպէս պէտք է մենք հաւատանք, նորա նամակները՝ թէ ինչպէս պէտք է իրար փոխադարձաբար սիրենք, և նորա չափնութիւնը՝ թէ ինչպէս պէտք է լուսանք: Երեք աւետարանիչները նկարագրում են մեզ Տիրոջ պատկերի արտաքինը, իսկ չա՛ ներքինը: Յիշենք նոյնպէս Սոկրատէսին, որ, մոռանալով կեանքի կենդանութիւնը, ընկել էր մտածողութիւնների մէջ և խորհում էր մինչև իւր վերջին րոպէն Աստուածալին զօրութեան մասին: Յիշենք ժամանակակից բանաստեղծներից՝ Լորդ Բայրոն, Նիկոլայուս Լեսնաու և այլն:

Նոյն տեմպերամենտին է պատկանում մեծ փիլիսոփայ Սպինոզան, որը վրձնուած Իսրայէլական ժողովարանից (սինագոգ), առանձնացած էր իւր սենեակում և թողնում էր ալդ վերջինը միմիայն՝ այն ժամանակ, երբ մի ճանճ էր բռնում և ձգելով սարդերի որոգալով՝ նայում սարդի և ճանճի պատերազմին: Ալդ առիթ տաւ նորան արտասանել այն միտքը, որ աշխարհն է պատերազմական դաշտ և կենդանի էութիւնները՝ պատերազմողներ. ընութեան օրէնքն է՝ ուժեղը պէտք է թուլին կլանէ, ոչնչացնէ:

Այս տեմպերամենտը գտնում ենք նաև Լիւթերի օգնական հռչակաւոր Փիլիպպոս Մեկանխտոնի մէջ: Մինչդեռ Լիւթերը պատերազմում էր իւր կատաղի թշնամու՝ պապականութեան դէմ, Մեկանխտոնը, որպէս Praeceptor Germaniae «Բողոքական վարդապետութեան սերմեր» ցանում էր 2000 վիւրտեմբերգցի ուսանողների սրտերի մէջ և խօսակցում էր նոյն Լիւթերի մասին տասն և մէկ լեզուներով իւր սեղանակիցների հետ: Մինչդեռ Լիւթերը վորմսի ժողովում իւր դաւանութիւնն է խոստովանում, Մեկանխտոնը լուրթեամբ չօրինում է Աուգսբուրգի խոստովանութիւնը (confession): Մտենք մանուկների աշխարհը: Նախ տեսենք թէ այս տեմպերամենտն ինչպէս է երեխաների մէջ արտապայտում: Յիշենք, որ մեղանխողի մի տեսակ ձգտումն ունի մտնելու ընութեան ծածկւած խորութիւնների մէջ, մտածելու Աստուածալինը, հոգեկանը, դիւականը: Նա մի տեսակ սիրով է վերաբերւում դէպի դարմանալին, խորհրդաւոր. ուստի մենք չենք սխալւիլ, եթէ ընդունենք, որ նա հակումն ունի դէպի կախարդալինը և անբնականը: Եթէ երեխայի մէջ արդէն նկատուում է, որ նա աւելի ներքինն է դիտում քան թէ արտաքինը, այն ժամանակ կարող ենք գուշակել, որ ալդ երեխան պատկանում է մեղանխողի տեմպերամենտին: Եւ եթէ դաստիարակը նկատում է, որ մանուկը հոգեկան, վերացական մտքերով է հետաքրքրւում, պէտք է անուշադիր չը թողնի ալդ կողմի կատարելապէս զարգացման նպաստելուն և ոչ էլ կատաղութեամբ խորտակէ երեխայի երևակայութեան աշխարհը: Եթէ մենք թողնենք մանկան,



որ նա խորատուրի հոգեկանի, վերացականի մէջ, ալն ժամանակ նրանից կարող ենք ստեղծել մի նախադաշարած, կախարդութեան պաշտող էակ. ուրիշ խօսքերով, կը բացենք մենք անսանձ երևակալութիւնների դռներն: Նրկրորդ դէպքում խորտակելով նորա երևակալական ուժը, կը փակենք նորան իւր մտածման շրջանի մէջ և մեղանխուղալին տեմպերամենտի մի կատարեալ պատկեր կը ստեղծենք:

# V.

## ՄԱՂԱՍԱՅԻՆ (Ֆիլեզմալին) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Շատերը կարծում են թէ ալս տեմպերամենտը աւելի վատ կողմեր, աւելի պակասութիւններ ունի, քան թէ առաջիններն: Սակաւն կ'աշխատենք աղ կարծիքները բոլորովին ջրել, ցոյց տալով որ սա ես նուն չափով, ինչպէս առաջիններն, իւր լաւ կողմերն ունի: Մաղասային տեմպերամենտի էական չափութիւնը կաշանում է հոգու հաւասարակշռութեան մէջ, որի ներքոյ հասկանում ենք զգալութեանց չափաւոր բնդունակութիւն, ոչ թէ խաղաւ անզգալութիւն, ինչպէս չատերն ալս տեմպերամենտի վերաբերեալ կարծում են: Հետեարար վերալիշեալ տողերից կարելի է եզրակացնել, որ ալս տեմպերամենտի դրական կողմը կաշանում է հոգու հանգստութեան, խաղաղութեան, հոգեկան ուժերի հաւասարակշռութեան մէջ, Ֆիլեզմատիկը թշնամի է շտապելուն, արագ մտածման և գործունէութեան. նա ամեն բանի համար ժամանակ է պահանջում, գործում է կամայ, սակաւն հիմնաւոր կերպով է հասնում իւր նպատակին:

Ֆիլեզմատիկի լաւագոյն կողմերից մէկն կարելի է համարել ալն, որ նորա սիրտը չնորհիւ հոգեկան հանգստութեան հեռու է բոլոր ճնշումից, զգացումներից և կրքերից և վալելում է կատարեալ աղատութիւն. նա ոչ ստատիկ օդեւորդ է, ոչ էլ խոր բնկղմաղ մի որ և է գործի մէջ, ուստի և աղատ է շատ բարօգական սխալմունքներից:

Մաղասայինը սիրում է հանդստութիւն և ատում է աշխատութիւնը և զրազմունքը: Նա գիմադրում է լուս և հանդիսաւ տղաւորութեանց և նորա բնդունածները լինում են չարատե և հաւատարիմ: Նա շատ սակաւ է բարկանում, ամեն մի չնչին բանի համար նա իւր հոգու և սրտի հանգստութիւնը չի խանդարիլ: Բայց ալս հանգստութիւնը, ծածկւած դանդաղկոտութեան քօղով, բնութեան և մարդկալին կեանքի ամենաշօրեղ ուժն է: Աս չաղթում է իւր չարատեութեամբ ներքին և արտաքին կեանքի մէջ տեղի ունեցած բոլոր մեծ արդեւքներին:

Բնութեան ալս լուս և աննկատելի աղդեցութիւնը Ֆիլեզմատիկի ամենահաւատարիմ պատկերն է: Ֆիլեզմատիկի կամքն արագ վճռող չէ, սակաւն և թէ նա մի բան վճռում է, ալն ժամանակ ոչ մի արդեւքից չէ քաշ-



ւում, համբերութեամբ և չարատեսութեամբ ամենամեծ դժւարութիւններէ առաջն առնելով՝ հասնում է նա իւր նպատակին, որի աղօթեցութեան ներքոյ լաւաջանում է նորա մէջ չափաւորութիւն և սովորութիւն դէպի բարին: Երբ ուրիշ աւուր չատկութիւններ ունի՝ Ֆլեգմատիկը՝ սէր դէպի կարգապահութիւն և մաքրութիւն: Բնատի և այս տեմպերամենտն է խորհող գիւտ անողներին, աշխատասէր մեքենագէտին, լուռ քաղաքացու, հանգիստ մշակի տեմպերամենտը, որոնք իւրաքանչիւր օր, թէև ոչ ողբալուստ, բայց և այնպէս ամենայն ճշդութեամբ կատարում են իրանց պարտքը և իրանց կատարածը ամենալաւն և ամենալաջողն է:

Հանգստութիւնը, կրքից հեռու լինելը, համբերութիւնը և հաստատ կամքը մաղասալին տեմպերամենտի դրական կողմերն են: Սորան աւելացրու ճշդացէս սրտի ուրախութիւնը, լաւ տրամադրութիւնը: Ձեզանից ու չէ տեսել, ընթերցողներ, ընկերական շրջանների մէջ անձնաւորութիւններ, որոնք պարզ և զարթ նպակացքով, ուրախ տրամադրութեամբ ընկերութեան մէջ ուրախութիւն և փալ են ներշնչում:

Ի հարկէ՝ Ֆլեգմատիկի այս լաւագոյն կողմերից ծագում են և նորա վատ կողմերն: Հանգստութիւնն աւելի մարմնական դառնալով՝ կարող է փոխադրել դանդաղութեան և ծուլութեան և զարթութիւնը—սառնասրտութեան և անտարբերութեան: Աղօլիսի պատկեր կարող է ընթերցողը տեսնել ճոյն մեր հրկրում, մեր ժողովրդի մէջ, փնջելով այն աղաներին, որոնք ծուլութիւնից մինչև կէս օր խալաթն հագած անտարբերութեամբ մեռցնում են իրանց առաւօտեան ժամերն և մնում են աղօլիսի դրութեան մէջ, մինչև որ ստիպւած են լինում չորեր հագնելու:

Ֆլեգմատիկի հոգին գրեթէ վախենում է խոր մտածմունքից և նորա մտածողութիւնները և վճիռները կարող են լինել ոչ ծանրակշիռ: Դոցանից կարող է հետեւել զգաւոր դէպի կեանքը և այն ժամանակ նորա գլխաւոր ձգտումն կը լինի կշտանալ և քնել: Նա կարող է սառնասիրտ դառնալ դէպի Աստուածալիքը և իղէալականը: Այն ժամանակ նա կը լինի ամենաողորմելի էակ աշխարհում:

Ահաւասիկ այս է չորրորդ և վերջին տեմպերամենտն իւր լաւ և վատ չատկութիւններով:

Յիշենք ալժամի բանի անձնաւորութիւններ, որոնք այս տեմպերամենտին են պատկանում: Յունական պատմութեան մէջ երևան է գալիս Արխիմէդէս, նոր պատմ. մէջ՝ Կոլումբոսը, մեծ փիլիսոփայ Էմմանուէլ Կանտը, որ 80 տարեալ կեանքում մի քալ անգամ իւր ծննդեան տեղից դուրս չէր եկել: Նա սիրում էր ամենայն կողմից լուս և հանգիստ տեղ, ուր կարողանար իւր ներքին կեանքով զբաղել, սիրում էր հանգստութիւն և լուսութիւն, որը առասպելական չափադանցութեան էր հասցրել: Կէնդիսքերդ քաղաքի խուլ մասերում ապրելուս, առաւօտներն ժամի 4-ից մինչև 5-ը լուսութիւնը ընդհատում էր հարեանին աքաղաղն, ուստի նա դիմաց հարեանին այդ



աքաղաղը դնելու, իսկ հարեանը կանտի առաջարկած մեծ դիմն էլ չ'ընդունելը, և մեծ փիլիսոփան տոխուած էր արաղաղի պատճառով, որ առաւօտները կանչում էր, տունը դատարկել տալ և ուրիշ տեղ փոխադրուել: Յիշենք կանտի կեանքից մի ուրիշ դէպք, ուր աւելի սղարդ երեան է գալիս նորա ֆելեգմատիկական տեմպերամենտն: Մէկ անգամ նա ճանապարհին պատահում է իւր ընկերներից մէկին, որը կառքով զրօսնելու է գնում, ալդ վերջինն առաջարկում է մեծ փիլիսոփային իրան ընկերակցելու. նա ընդունում է նորա առաջարկութիւնը. բայց մեծ փիլիսոփան շատ ուշ է վերադառնում տուն և ալն էլ զրօսանքից լողնում է և իւր հանգստութիւնը խանդարում, ալն ժամանակ վճռում է նա և գրում է իւր վերադառնալի մէջ հետեւեալն. «Ա՛յ մի ժամանակ չը պէտք է ձրի ուրիշի կառքի մէջ նստել»:

Ձը մոտանանք մանկական և աշակերտական շրջանը, ալն է ընտանիքի և ուսումնարանի մէջ:

Ֆելեգմային տեմպերամենտն միւսներից ամենաքիչ չատուկն է երեխաներին, ուստի ֆելեգմատիկ երեխան նոյն չափով անընական երեւոյթ է, ինչ չափով տանգրինական ծերունին: Բայց և ալնպէս ում չեն պատահել տանն և ուսումնարանում աշխատութիւնից և մտածելուց փախչող, մի կարծ վճռի անընդունակ երեխաներ և աշակերտներ: Ի հարկէ իւրաքանչիւրը կը խոտտովանի, որ մինչև անգամ լաճախ տեսել է աղտոյիտիւններին: Ալդ վերաւիշեալ կէտերը ֆելեգմային մանկան ճիշդ լատկութիւններն են: Իսկ դորա հակառակ դաստիարակը պէտք է ամենալն զգուշութեամբ և առողջ դատողութեամբ պատերազմի, որովհետեւ աղտոյիտի մանուկներին ամենաազդու դաստիարակութիւնը մեծ արդիւնքներ չէ տալիս, բոտ որում ալս տեմպերամենտի վատազոյն կողմերն արդէն մարդուս թունաւորում են նորա ծաղիկ հասակում:

Մանկավարժական հետեւեալ միջոցները պէտք է դաստիարակը աչքի առաջ ունենայ. — Մարդ պէտք է ոչ շատ առատաձեռն լինի վարձատրութեան, ոչ էլ առատ՝ պատիժների մէջ: <sup>1)</sup>

Առաջին միջոցով դաստիարակը պէտք է աշխատի աշակերտի մտածողական ուժն և աշխատութիւնն ուղիղ չաղի վերաջ կանդնեցնել. ամեն մի փոքրիկ պարտաճանաչութիւն պէտք է պատկեր վարձատրութեամբ, թող լինի դա միայն մի լոկ դովասանք: Բայց չէ նշանակում, որ երեխային պիտի տանք դորանով ձգտումն ամեն բանի մէջ իւր սեպհական օգուան աչքի առաջ ունենալու և դարդացնենք դորանով մատաղ սերնդի մէջ օգտամուլութիւն (Principium utilitatis): Ալդ կարող է շարունակուել միմիայն մի կարճ ժամանակամիջոց, իսկ երբ անմիջական հարցասիրութիւնն արդէն քիչ թէ շատ դարդացրել ենք, կարող ենք վարձատրութիւնը մի կողմ ձգել:

<sup>1)</sup> Տե՛ս «Արձագանք» 1887 թ. №№ 48, 49 «Մանկավարժական պատիժ» վերնագրով յօդւածը:



Ներկորող միջոցով, այն է՝ ահ տալով աշակերտին, աշխատում ենք ոչնչացնել նորա մէջ ծուլութիւնը, թող լինի այդ նկատողութիւն, վատարեալութիւն, ակնարկութիւն և այլն:

Գիտմբը պատմում է հետեւեալ դէպքը. «Մի Ֆլեդմային մանուկ պէտք է մի որոշ ժամանակի ընթացքում մի թւարեանական խնդիր լուծէր: Նա չէր կարողանում, բայց աճու ամենաճիւ պէտք է կարողանար: Վարձատրութիւնն էր մի խմորեղէն: Մանուկը նկատեց իւր դրութիւնը և երկար մտածելուց չհետո՞ կարողացաւ վերուիշեալ խնդիրը լուծել և դորանով անպատասխան Ֆլեդմային ճշող ուժը: Արտասովոր սիրով և չարատեութեամբ սկսեց նա պարապել մաթեմատիկայով և վերջն էլ ընտրեց ասպարէզը մաթեմատիկայի ուսումնասիրութիւնը:

## VI.

Մինչև այժմ փորձեցինք չորս տեմպերամենտներն իրանց լաւ և վատ չատկութիւններով նկարագրել: Այս նկարագրութիւնները միմիայն կոնտուրն եր են, ուստի և, չարդելի ընթերցողներ, գուցէ ձեր կատարեալ պատկերները վերուիշեալ նկարագրութիւնների մէջ չը գտնէք:

Զգուշ ինքնադիտողութիւնը, ուրիշների վերայ արած փորձերը ցոյց են տալիս մեզ, որ իւրաքանչիւր անհատի մէջ տեմպերամենտներից մէկը գերիշխողն է, բայց ոչ մէկը զուտ չէ պատկերանում, այլ միշտ փոքր ի շատէ ուրիշ տեմպերամենտների խառնուրդների հետ միացած: Սորա սկզբնապատճառը հնչտ չէ մի քանի խօսքով բացատրել: Պարզ է, որ մի հասակն առած անհատի մէջ տեմպերամենտներից մէկը գերիշխողն է, այն ինչ պէտք է դա նոյն անհատի մանկական հասակում աւելի մաքուր լինէր, ըստ որում կեանքի, կրթութեան ազդեցութիւնը շատ անգամ տեմպերամենտի այս կամ այն չատկութիւնները բոլորովին ոտնակոխ է անում:

Սանգլինիկին կրթելով կարող ենք մենք նորա շատ չատկութիւններն ոչնչացնել: Գիւղական սանգլինիկ երեխայի ծննդեան տեղի միակողմանի լինելը, կեանքի միակերպութիւնը կարող են հէնց սկզբից սանգլինիկի մի քանի չատկութիւնները ոտնակոխ անել: Նթէ այդ գիւղական երեխան քաղաքում ապրէր, գուցէ աւելի կատարեալ սանգլինիկ լինէր. ուրեմն կեանքի ազդեցութիւնն է, կեանքի փոթորիկներն են, որ թույլ չեն տալիս մի որ և է տեմպերամենտի կատարեալ զարգացումը: Սանգլինիկն ընկնելով կեանքի ծովի մէջ, կռւելով ալիքների դէմ, կարող է մեղանխովի դառնալ, իւր այն մանկական զարթութիւնը կորցնել, փոփոխամտութիւնը հաստատականութեան փոխել: Նոյն իսկ մեղանխովի կարող է ժամանակով սանգլինիկի այս կամ այն չատկութիւնը իրան սեպականացնել: Սանգլինիկը կրթութեան, ուսման միջոցով կարող է ժամանակով խողովի չատկութիւններից շատերն իրան չատկացնել. գուցէ տեսած լինի ընթեր-



ցողը, որ մէկը բնութեամբ սանդղինիկ՝ ջերմ պաշտպան է հանդիսանում մինչև իւր մահուան վերջին րոպէն մի որ և իցէ զաղափարի:

Եթէ իւրաքանչիւր անհատի տեմպերամենտի ճիշդ որոշումն դժարութիւններ է լստաջացնում, ապա աւելի դժարին կը լինի որոշել ազգերի և ցեղերի տեմպերամենտը:

Ինչ առաջինին է վերաբերում, հանրածանօթ ճշմարտութիւն է, որ ֆրանսիացիք՝ սանդղինիկ, անգլիացիք՝ մեղմոյսովիկ, գերմանացիք՝ ֆիւզմատիկ և իտալացիք՝ խոլերական են: Ըստ ցեղերի, նեղրները սանդղինիկներ են, մոնղոլներն առաւելապէս մեղմոյսովիկ, մալալներն՝ խոլերիկ, ամերիկացիք՝ ֆիւզմատիկ և Կովկասեան ցեղը՝ չափաւոր խոլերիկ:

Կլիմայի հանդամանքներն աչքի առաջ ունենալով, արևմուտքը սանդղինական է, արևելքը՝ խոլերական, հիւսիսը՝ մեղմոյսովիկ և հարաւը՝ ֆիւզմատիկ:

Տեմպերամենտների նկարագրութիւնից վատու, տեսնենք որը դոցանից աւելի արժանաւոր պէտք է համարել, որքն աւելի կը ցանկալինք ձգտել, որն է աղբ տեմպերամենտներից աւելի գեղեցիկը: Աղբ հարցը ինձ համար աչքաւ քիչ նշանակութիւն ունի, որքան հետեւալն, որն աւելի օգտաւէտ է մարդկութեան՝ շողենաւ թէ երկաթուղին:

Տեմպերամենտների մէջ լաւն և վատը չենք կարող որոշել, որովհետեւ բնութիւնը կողմնապահ չէ, որ մէկին աւելի առաւելութիւններ շնորհէր քան միւսին, ուստի իւրաքանչիւր անհատ թող բաւական լինի իւր տեմպերամենտով: Եթէ արժանաւորութեան մասին խօսելու լինինք, անշուշտ իւրաքանչիւրն իւր հաւելցակէտից կարող է որոշել. օրինակ, խոլերիկը ֆիւզմատիկի հետ աչքաւ սակաւ բարեկամական դաշնակցութիւն կապել կարող է, որքան սանդղինիկը մեղմոյսովիկի հետ. դոցա ուղղութիւններն հակասող են իրար: Ասկան փորձը ցոյց է տալիս, որ ֆիւզմատիկը ուրախութեամբ է որոնում սանդղինիկի շրջանը և խոլերիկն ուրախութեամբ մեղմոյսովիկի հետ է լարաբերութիւն ունենում, ըստ որում դոքա իրար դործի չեն դիպչում: Նոյնպէս հանրածանօթ ճշմարտութիւն է, որ տեմպերամենտն աշտուղ ևս մեծ դեր է խաղում, երբ երկու անձնաւորութիւններ ցանկանում են միշտ իրար հետ ապրել: Տեմպերամենտների նոյնութիւնը ամուսնութեան բաղդաւորութեան համար շատ վտանգաւոր փորձաքար է. եթէ կինը սանդղինիկ է, իսկ մարդը՝ խոլերիկ, ապա առաջինը ընկնում է մարդու աղբեցութեան տակ, տարածաշնորհութիւնը, նեղութիւնը անցնելուց վատու, նա կրկին առիթ է որոնում մարդուն դէպի իրան քաշել և ամեն բան մոռանալ տալ: Հակառակ դէպքում մարդն է ընկնում կնոջ աղբեցութեան տակ և նոյն դերն խաղում: Եթէ երկուսն էլ խոլերիկ են, աչն ժամանակ լաճախ անբաղդութիւն է տիրում ընտանիքի մէջ, եթէ մարդը խոլերիկ է, իսկ կինը ֆիւզմատիկ, աչն ժամանակ ընտանիքի բաղդաւորութիւնը չէ



խանդարեում, ըստ որում այդ վերջինը մարդու ամեն մի խօսքին մեծ ուշադրութիւն չէ դարձնում և այլն: Մնացածը թողնում եմ ընթերցողներին մտածելու:

Վերելի տողերում չափոնեցինք, որ այս կամ աչն տեմպերամենտի չարաբերական արժէքը կարելի է միմիայն սեպհական տեմպերամենտի միջնորդութեամբ որոշել: Պորանից զատ կա և մի ուրիշ նպաստող միջոց, այդ աչն հանդամանքն է, որի մէջ գտնւում է մի անձնաւորութիւն: Օգնութեան գործի մէջ աւելի լաւ օգնութիւն հասցնողների չինք կարող դիմել, քան խոլերիկներին և Ֆլեդմասիկներին: Մինչդեռ ով ուզում է որ իրան ցաւակցեն, այդ երկուսից ոչինչ չէ կարող սպասել: Նթէ ուզում էք միութեաւ մի որ և իցէ անբաղդ դէպքից, դնացէք մեղանխոյիկի մօտ, ըստ որում նա շատ չաճախ է ալդպիսի անբաղդութիւնների վերաջ մտածել: Նթէ արտապատելու մի բան ունիք և ուզում էք, որ ձեզ լսող լինի, դնացէք սանգլինիկի մօտ. նա պատրաստ է ընդունել ձեր առաջարկութիւնը, նա ձեզ հետ կը ծիծաղի, նա ձեզ հետ միասին կը ցաւի, նա ժամանակաւորապէս կը մտնի ձեր դրութեան մէջ, նա մասնակից կը լինի ձեր բոլոր ցաւերին և ուրախութիւններին, բայց օգնութիւն հասցնել չէ կարող. սակայն չաճախ առաջինն աւելի նշանակովիւն ունի քան օգնութիւնը:

Ալթմ դիմենք մի ուրիշ խնդրի, որն աւելի կարող է պարզել տեմպերամենտի չափութիւններն: Անշուշտ պէտք է կուել աչն սխալ կարծիքի դէմ, որ իբր թէ տեմպերամենտներից մէկին չատուկ է առաքինութիւն, միւսը տանում է դէպի չարն և այլն: Սորանից կարելի է եղբակացնել, իբր թէ բարոյականութեան կամ անբարոյականութեան սկզբնապատճառը գտնւում է անհատի բնական չափութիւնների մէջ:

Անշուշտ պարզ է, որ իւրաքանչիւր տեմպերամենտ կարող է զանազան դժւարութիւններ չառաջացնել, բայց ոչ ուղղակի տանել դէպի առաքինութիւնը կամ անբարոյականութիւնը, ըստ որում տեմպերամենտների տարբերութիւնը չէ բարոյական, այլ բնական. բարոյականը կամ անբարոյականը կ'որոշւի, երբ կամքը մէջը կը խառնւի, աչս կամ աչն կողմն կը չեղի: Ուստի մեծ սխալ կը լինէր, եթէ տեմպերամենտը բնաւորութեան տեղ ընդունէր և բնաւորութիւնն էլ՝ տեմպերամենտի տեղ: Աչն պահանջողութիւնը, որ մարդ իւր տեմպերամենտն փոխէ ուրիշն ընդունէ՝ կարող է մեր կողմից ծաղրալի պահանջողութիւն համարւել: Սակայն եթէ մարդ իւր վատ բնաւորութեան դէմ է գործում, ինչպէս ստախօսութեան, չարամբողութեան դէմ, անշուշտ մենք կը գովասանենք այդ անձին:

Բնաւորութիւնն է ներքին ազատութեան արդիւնքը, ներքին ազատութիւնն է կամքի խղճին ենթարկւելը: Նթէ մարդ իւր խղճի համաձայն է գործում, եթէ մարդու ամեն մի գործի մէջ նորա խիղճն է որոշողը և հրամանատարն, աչն ժամանակ նա կը վախելէ ներքին ազատութիւն: Բայց և այնպէս պէտք է կամքը ուժեղ և չարատե լինի:



Հետևաբար բնաւորութիւնն է մի բարոյական որոշումն, որ մենք ինքներս մեզ պէտք է տանք: Մարդու բարոյական բնաւորութիւնն ոչ թէ կարող է իրան վտիտխել, այլև պէտք է վտիտխի, եթէ բնաւորութեան մէջ բարոյականութեան հանդիպող տարրեր ենք նկատում: Բայց բնաւորութիւնը պէտք է բնական հիման վերաջ կառուցանել: Ուստի բնաւորութեան հիմք դնողը տեմպերամենտն է, իսկ նորա ուղղութիւնը, զեղեցկութիւնը վաղ տող բարոյական կամքն է. ուրեմն իւրաքանչիւր տեմպերամենտ ինքն ըստ ինքեան լաւ և զեղեցիկ է և ոչ մէկը նոցան ից կեանքի բարոյական խնդրի լուծող չէ, ալ ինչ ասեղծւած է բնաւորութեան հիմքը լինելու համար:

Հաշուաւորելով, դատարարներ, այս խօսքերս ձեզ են նւիրւած. ուստի չարքէք իւրաքանչիւր տեմպերամենտ և մտէք իւրաքանչիւր երկխոյի հոգու մէջ, քննեցէք նորա հոգու չափութիւնները: Այն ժամանակ միայն ձեր դատարարական կոշումն կը պսակի, ալն ժամանակ միայն կարող էք իւրաքանչիւր տեմպերամենտի մէջ ծածկւած ոսկին գտնել, կեղտերից մաքրել և նորա վերաջ բնաւորութեան հիմքը կառուցանել: